ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ, ԷԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը ՀՆԱ-ի ցուցանիշի միջոցով ու դրանց փոփոխման միտումները վերջին 20 տարում: Տնտեսության նոր կառուցվածքի առաջադիմականության և տնտեսության նոր ավելացված արժեք ստեղծելու հնարավորության գնահատման մոտեցումները տարբեր են՝ պայմանավորված արտադրողականությամբ, արտահանման ուղղվածությամբ և այլ չափորոշիչներով:

Ելնելով ՀՆԱ-ի միջոցով կառուցվածքային տեղաշարժերի գնահատման նպատակից՝ կարևորվել են հետևյալ ուղիները՝ հետազոտել երկարատև ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ-ի արտադրության հաշիվն ու դրա կառուցվածքը, ըստ եկամուտների հաշվարկված ՀՆԱ-ի սկզբնական եկամուտների ձևավորման և բաշխման հաշիվը, ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքը, աշխատավարձի ու խնայողությունների փոխադարձ կապը և օրինաչափությունները, ինչպես նաև գնահատել երկարատև ժամանակահատվածում ՀՆԱ-ի՝ տարբեր մեթոդներով հաշվարկված մեծությունների միտումները, արդյունքներն ու հետևանքները:

ՀՆԱ-ի արտադրության և օգտագործման կառուցվածքների դիտարկումը թույլ է տալիս նկատել մի շարք օրինաչափություններ տնտեսության տարբեր ճյուղերի համամասնությունների փոփոխման, մասնավորապես՝ արդյունաբերության մասնաբաժնի կրճատման, շինարարության ու ծառայությունների տեսակարար կշռի ավելացման, ինչպես նաև արդյունաբերության ճյուղային կառուցվածքում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Հոդվածում կատարված վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի կառուցվածքում նվազել է վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասնաբաժինը՝ ի հակադրություն համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների մասնաբաժնի աճի, ինչը վկայում է ՀՀ-ում աշխատանքի թերարժևորման մասին:

Յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար օգտագործվող ռեսուրսների (արտադրական, բնական, մարդկային կապիտալների և արտաքին զուտ ակտիվների) ամբողջությունը, որն անհրաժեշտ է հասարակության նյութական և հոգևոր պահանջմունք-

ների բավարարման համար, հանդես է գալիս որպես ՀՆԱ-ի ստեղծման գործընթաց: Ըստ որում, այդ ռեսուրսների մի մասն օգտագործվում է թողարկվող ապրանքների և ծառայությունների միջանկյալ սպառման համար, իսկ այդ երկուսի տարբերությունը ավելացված արժեքն է, որն էլ իր հերթին կազմում է ողջ հասարակության աշխատավարձի ֆոնդը և շահույթը: Իսկ եթե ավելացված արժեքին գումարենք արտադրության հարկերը (հանած սուբսիդիաները), ապա կստանանք համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) մեծությունը: ՀՆԱ-ն՝ որպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշ, առաջին հերթին բնորոշում է հասարակության տնտեսական ներուժը կամ, այլ կերպ ասած, ամեն երկրի տնտեսական հզորության ցուցիչն է[1]: Այս տեսանկյունից կարևորվում են նաև ՀՆԱ-ի ձևավորման արդյունավետության գործընթացն ու դրա մակարդակը, որոնք կարելի է դիտարկել որպես ՀՆԱ-ի (իբրև զարգացման տնտեսական արդյունքի) և դրա ստացման համար (որպես կանոն մեկ տարվա կտրվածքով կատարված) թողարկման ծավալը: Ըստ այդմ էլ ՀՆԱ-ի և թողարկման ծավալների մեծությունը կարելի է դիտարկել որպես ողջ երկրի տնտեսական արդյունավետության ցուցանիշ, և որքան բարձր է այդ ցուցանիշը, այնքան հաջողված և արդյունավետ կարելի է համարել ՀՆԱ-ի ստեղծման գործընթացը: Մյուս կողմից, ՀՆԱ-ն, բացի ավելացված արժեքից, ներառում է նաև արտադրության հարկերը (հանած սուբսիդիաները)՝ դրանով իսկ բնորոշելով նոր ստեղծված արդյունքի մեջ պետությանը բաժին ընկած արժեքի մեծությունը: Աղյուսակ 1-ում բերված է ՀՀ արտադրության հաշիվը և դրա կառուցվածքը 1997-2018 թթ.:

Այստեղ նկատելի է, որ ՀՆԱ-ի թողարկման ծավալների ավելացմանը զուգընթաց՝ ՀՀ-ում բարձրացել է դրա ստեղծման արդյունավետությունը: Այսպես, եթե 1997 թ. ՀՆԱ-ի մեծությունը թողարկման մեջ կազմել է 57.8%, ապա 2017 թ. և 2018 թ.՝ 71.5%, իսկ արտադրանքի հարկերի (հանած սուբսիդիաները) հարաբերակցությունը թողարկման ծավալին փոփոխվել է՝ 4.6%-ից հասնելով 7.6%-ի:

Ինչպես հայտնի է, ՀՆԱ-ն՝ որպես երկրի տնտեսության բոլոր ոլորտներում ստեղծված ավելացված արժեքների հանրագումար, միևնույն ժամանակ նաև դրանց ստեղծմանը մասնակցող ինստիտուցիոնալ հատվածների եկամուտների ամբողջությունն է: Այդ տեսանկյունից տնտեսությունում կատարվող փոփոխությունների կարևոր բնութագրիչներ են ՀՆԱ-ի ստեղծմանը մասնակցած այդ հատվածների միջև եկամտի բաշխման հարաբերակցությունը և շարժը:

---

[1] Դավոսյան վերջին համաժողովում առանձնահատուկ քննարկման նյութ դարձավ նաև տնտեսական զարգացման չափման մեկ այլ ամփոփ ցուցանիշ, որն անվանում են ներառական զարգացման համաթիվ (ինդեքս), որին կանդրադառնանք մեկ այլ ուսումնասիրությամբ:

Աղյուսակ 1

ՀՀ արտադրության հաշիվը ըստ թողարկման, միջանկյալ սպառման, ՀՆԱ-ի, այդ թվում՝ ավելացված արժեքի և արտադրանքի հարկերի (հանած սուբսիդիաները) և դրանց կառուցվածքը, 1997-2018 թթ.[2]

Տարի	Թողարկում (հիմնական գներով)	Միջանկյալ սպառում	Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	Այդ թվում՝ ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաները)
1997	1390998.2	650957.4	804335.6	740040.8	64294.8
	100.0	46.8	57.8	53.2	4.6
2000	1672235.3	735133.7	1031338.3	937101.6	94236.7
	100.0	44.0	61.7	56.0	5.6
2002	2219599.8	989002.0	1362471.1	1230597.2	131874.5
	100.0	44.6	61.4	55.4	5.9
2007	4720075.7	1886340.4	3149283.4	2833735.3	315548.1
	100.0	40.0	66.7	60.0	6.7
2008	5198641.0	2035695.7	3568227.6	3162945.3	405282.3
	100.0	39.2	68.6	60.8	7.8
2009	4422761.2	1613664.1	3141651.0	2809097.1	332553.9
	100.0	36.5	71.0	63.5	7.5
2010	4891551.4	1820474.2	3460202.7	3071077.2	389125.5
	100.0	37.2	70.7	62.8	8.0
2012	5989851.8	2181625.6	4266460.5	3808226.0	458234.0
	100.0	36.4	71.2	63.6	7.7
2013	6380782.2	2331572.1	4555638.2	4049210.0	506428.0
	100.0	36.5	71.4	63.5	7.9
2014	6754005.6	2471214.2	4828626.3	4282291.0	546335.0
	100.0	36.6	71.5	63.4	8.1
2015	7069110.9	2561278.8	5043633.2	4507832.1	535801.1
	100.0	36.2	71.3	63.8	7.6
2016	7148939.7	2590449.8	5067293.5	4558489.9	508803.6
	100.0	36.2	70.9	63.8	7.1
2017	7782850.8	2790432.5	5564493.3	4992418.3	572075.0
	100.0	35.9	71.5	64.1	7.4
2018	8393627.8	3027699.1	6005058.1	5365928.7	639129.4
	100.0	36.1	71.5	63.9	7.6

Ծանոթագրություն. համարիչում՝ մլն ՀՀ դրամ, հայտարարում՝ %-ով թողարկման նկատմամբ:

[2] Այս և հետագա աղյուսակները կազմվել և հաշվարկվել են Հայաստանի վիճակագրական տարեգրքերի (ՀՀ ԱՎԾ, ՀՀ վիճակագրական կոմիտե) տվյալների հիման վրա, https://www.armstat.am/am/?nid=586:

Գծանկար 1-ում ներկայացված է ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի 1990-2008 թթ. (մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա ընդգծված դրսևորվեց 2009 թ.), ՀՆԱ-ի կառուցվածքի շարժն ըստ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության, արտադրության և ներմուծման զուտ հարկերի, համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների: ՀՆԱ-ի եկամտային այդպիսի կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, թե երկրում ստեղծված ավելացված արժեքը կամ սկզբնական եկամուտները ինչ հարաբերակցությամբ են բաժանվում դրանց ստեղծմանը մասնակցած վարձու աշխատողների, պետության և գործարարների միջև:

Միաժամանակ երևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ կառուցվածքում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասնաբաժինն էականորեն կրճատվել է՝ 57.4%-ից հասնելով 37.2%-ի, նվազելով ավելի քան 20 տոկոսային կետով: Փոխարենը նույն չափով ավելացել է տնտեսության համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ հասնելով 50 տոկոսի: Սա նշանակում է, որ նոր ստեղծված եկամտի կեսը բաժին է հասնում գործարարներին կամ այս դեպքում տեղին է օգտագործել ձեռնարկատերերին և միայն 1/3-ից փոքր-ինչ ավելին՝ վարձու աշխատողներին: Պետության մասնաբաժինը՝ արտադրության և ներմուծման զուտ հարկերի տեսքով, ընդամենը 12.8% է, որը մոտ երկու տոկոսային կետով բարձր 1990 թ. մակարդակից:

Գծանկար 1

ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի, 1990-2008 թթ.[3]



[3] Աղբյուրը՝ համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերը («Ազգային հաշիվների համակարգ» բաժին), (www.armstat.am):

Ստացվում է, որ արտադրության և ներմուծման նկատմամբ կիրառվող անուղղակի հարկային եկամուտները ավելացված արժեքի ընդամենը 12.8%-ն են, այն դեպքում, երբ ԱԱՀ դրույքաչափը շատ ավելի բարձր է: Սա վկայում է անուղղակի հարկերի և մասնավորապես՝ ԱԱՀ կիրառման անարդյունավետության և տնտեսությունում մեծ ծավալի ստվերայնության մասին:

Հարկ է նկատել, որ զարգացած տնտեսությամբ երկրներում գործում է «սուրբ երրորդության» մոտեցումը, երբ վարձու աշխատողների, պետության և ձեռնարկատերերի մասնաբաժինը ստեղծված ավելացված արժեքում գրեթե հավասար է, այսինքն՝ վերը դիտարկվող ինստիտուցիոնալ հատվածներից յուրաքանչյուրի մասնաբաժինը գտնվում է 1/3-ի շրջակայքում: Այս առումով պետք է արձանագրել, որ վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում տեղի է ունեցել եկամտի ձևավորման կառուցվածքային անհամամասնությունների խորացում՝ ի վնաս վարձու աշխատողների և հօգուտ ձեռնարկատերերի:

Տնտեսության վերարտադրողական ունակությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե տնտեսությունում ստեղծված ձեռնարկատիրական շահույթի որ մասն է վերաներդրվում տնտեսական գործունեության մեջ, կամ էլ ինչ չափով է իրականացվում արտադրական հզորությունների նորացում կամ արդիականացում: Այս առումով ուշագրավ կարող է լինել տնտեսության համախառն շահույթի և խառը եկամուտների կառուցվածքի դիտարկումը: Այս ցուցանիշն ունի երկու էական բաղկացուցիչ՝ հիմնական կապիտալի սպառում և տնտեսության զուտ շահույթ ու զուտ խառը եկամուտներ:

Դիտարկվող ցուցանիշը 1990 թ. սկսած մինչև 1995 թ. կտրուկ անկում է ունեցել՝ 46.9%-ից հասնելով 25.7%-ի: Դրանից հետո որոշակի կայունացում և աճ է նկատվել մինչև 2000 թ., երբ այս հարաբերակցությունը հասավ 31.2%-ի, այնուհետև նորից նվազման միտումները սկսեցին գերակայել՝ դիտարկվող ժամանակահատվածի վերջում հասնելով 21.0%-ի սահմանին: Սա նշանակում է, որ ՀՀ տնտեսությունում կապիտալատար ճյուղերի մասնաբաժինը աստիճանաբար նվազում է: Եվ, բացի այդ, ձեռնարկատերերը տարեցտարի նախընտրում են կա՛մ ստացված շահույթը հանել տնտեսական գործունեությունից, կա՛մ էլ այն վերաներդնել հատույցի փոքր ժամկետով և կապիտալատարության ցածր աստիճանով գործունեության ոլորտներում, ինչպիսին է, օրինակ, առևտուրը կամ հանրային սնունդը:

Աղյուսակ 2-ում տրված են հետճգնաժամային ժամանակահատվածում ՀՀ եկամուտների ձևավորման հաշիվն ու դրա կառուցվածքը: Տվյալներից երևում է, որ տնտեսության համախառն շահույթը և համախառն խառը եկամուտները 2008 թ. կազմել են ՀՆԱ-ի 50%-ը, իսկ 2017 թ.՝ 53.9%-ը: Ըստ որում, հիմնական կապիտալի սպառումը 2008 թ. կազմել է 10.5%, իսկ տնտեսության զուտ շահույթը և զուտ խառը եկա-

մուտները՝ 39.5%: Այդ ցուցանիշները 2017 թ. կազմել են համապատասխանաբար՝ 13.5% և 40.5%: Արտադրության և տեխնոլոգիաների արդիականացման տեսանկյունից ակներև է, որ անհրաժեշտ է ավելացնել տնտեսության զուտ շահույթի և զուտ խառը եկամուտների բաժինը ՀՆԱ-ում՝ արդյունավետ ընդլայնված վերարտադրություն կազմակերպելու համար:

Աղյուսակ 2

ՀՀ եկամուտների ձևավորման հաշիվը և կառուցվածքը, 2008-2017 թթ.

	2008	2009	2010	2012	2014	2016	2017
1. Ներքին արդյունք (համախառն շուկայական գներով)	3568.2	3141.7	3460.2	4266.5	4828.6	5067.3	5564.2
	100	100	100	100	100	100	100
2. Տնտեսության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ	1784.8	1550.7	1734.4	2264.7	2584.5	2735.2	3000.1
	50.0*	49.4	50.1	53.1	53.5	54.0	53.9
3. Հիմնական կապիտալի սպառում	375	341	389.5	539.2	614	704.9	748.5
	10.5*	10.9	11.3	12.6	12.7	13.9	13.5
	21.0**	22.0	22.5	23.8	23.8	25.8	24.9
4. Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ	1409.8	1209.7	1344.9	1725.5	1970.6	2030.3	2251.5
	39.5*	38.5	38.9	40.4	40.8	40.1	40.5
	79.0**	78.0	77.5	76.2	76.2	74.2	75.0

Ծանոթագրություն. համարիչում՝ ընթացիկ գներով, մլրդ դրամ, հայտարարում՝ *%-ով ՀՆԱ-ի նկատմամբ, **%-ով տնտեսության համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների նկատմամբ:

Երկրի տնտեսությունում ձևավորված համամասնությունների վերլուծության կարևոր ուղղություններից է ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքի դիտարկումը, որի հիմնական բաղկացուցիչներն են վերջնական սպառմանն ուղղված ծախսերը, համախառն կուտակումը ու ապրանքների և ծառայությունների զուտ արտահանումը: Տվյալների վերլուծությունից հետևում է, որ ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառմանն ուղղված ծախսերը 1990-1995 թթ. աճել են՝ 66.3%-ից հասնելով մինչև 117.4%-ի, ինչը նշանակում է սպառման ծավալների աճ նախկինում կուտակված խնայողությունների հաշվին: 1996 թ. սկսած՝ իրավիճակն այս մասով որոշակիորեն շտկվել է, սակայն դեռևս հեռու է բավարար համարվելուց, քանի որ երկրում ստեղծված եկամտի շուրջ 80 տոկոսի սպառումը նշանակում է տնտեսության վերարտադրական հնարավորությունների խիստ ցածր մակարդակ (տե՛ս աղյուսակ 3):

Համախառն կուտակման մասնաբաժինը, որը բնութագրում է երկրի վերարտադրողական ներուժը, ՀՆԱ-ում 1992 թ. հասնելով գրեթե զրոյական մակարդակի, հետագա 1-2 տարիներին նույն տեմպերով վերականգնվեց, իսկ 1999-2008 թթ. կայուն աճի տեմպեր արձանագրելով՝ դիտարկվող ժամանակահատվածի վերջում անցավ 40 տոկոսի

սահմանագծից՝ այդ կերպ հավասարվելով 1991 թ. մակարդակին:

Ըստ որում, գրեթե համանման դինամիկա է դրսևորել նաև համախառն խնայողությունների մասնաբաժինը համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքում (1990-2017 թթ. համար տե՛ս գծանկար 2 և 2007-2017 թթ. համար՝ աղյուսակ 4):

Աղյուսակ 3

ՀՀ ՀՆԱ-ի օգտագործումը և կառուցվածքը, 2001-2018 թթ.

Ցուցանիշը	2001	2003	2005	2006	2007	2008	2009	2010
1. ՀՆԱ, ընթացիկ գներով	1175.9	1624.6	2242.9	2656.2	3149.3	3568.2	3141.7	3460.2
	100	100	100	100	100	100	100	100
2. Վերջնական սպառման ծախսեր	1233.7	1518.9	1930	2187.1	2576.3	2918.8	2944	3289.6
	104.9	93.5	86.0	82.3	81.8	81.8	93.7	95.1
3. Համախառն կուտակում	232.3	394.1	683.3	953.7	1189.9	1458.4	1089.2	1137.3
	19.8	24.3	30.5	35.9	37.8	40.9	34.7	32.9

աղյուսակ 3-ի շարունակությունը

Ցուցանիշը	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
1. ՀՆԱ, ընթացիկ գներով	3777.9	4000.7	4555.6	4828.6	5043.6	5067.3	5564.5	6005.1
	100	100	100	100	100	100	100	100
2. Վերջնական սպառման ծախսեր	3649.4	4047.9	4514.9	4714.3	4599.4	4598.6	5138.7	5565.1
	96.6	101.2	99.1	97.6	91.1	90.7	92.3	92.7
3. Համախառն կուտակում	1030.6	1016.5	1014.2	1007.8	1045.6	912.9	1073.4	1344.9
	27.3	25.4	22.3	20.9	20.7	18.1	19.3	22.4

Ծանոթագրություն. համարիչում՝ ընթացիկ գներով, մլրդ դրամ, հայտարարում՝ %-ով ՀՆԱ-ի նկատմամբ:

Աղյուսակ 4

ՀՀ տնօրինվող եկամտի օգտագործման հաշիվը և կառուցվածքը, 2007-2017 թթ.

Ցուցանիշը	2007	2008	2009	2010	2011
1. Համախառն տնօրինվող եկամուտ, ընդամենը	3567.8	4060.5	3497.9	3797.1	4255.4
	100.0	100.0	100.0	100.0	100.0
Օգտագործում					
2. Վերջնական սպառման ծախսեր	2576.3	2918.8	2944.0	3289.0	3649.4
	72.2	71.9	84.2	86.6	85.8
3. Համախառն խնայողություն	991.5	1147.1	553.9	507.5	606.0
	27.8	28.3	15.8	13.4	14.2

աղյուսակ 4-ի շարունակությունը

Ցուցանիշը	2012	2013	2014	2015	2016	2017
1. Համախառն տնօրինվող եկամուտ, ընդամենը	4809.6	5173.4	5363.5	5526.1	5440.9	6079.6
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Օգտագործում						
2. Վերջնական սպառման ծախսեր	4184.3	4514.9	4714.3	4599.4	4598.6	5138.7
	87.0	87.3	87.9	83.2	84.5	84.5
3. Համախառն խնայողություն	625.3	599.9	649.1	926.7	842.4	940.9
	13.0	11.6	12.1	16.8	15.5	15.5

Ծանոթագրություն. համարիչում՝ ընթացիկ գներով, մլրդ դրամ, հայտարարում՝ %-ով ընդամենի նկատմամբ:

Գծանկար 2

Համախառն խնայողության տեսակարար կշիռը համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքում 1990-2017թթ., %-ով[4]



Այսպես, 1990 թ. 33.7%-ից համախառն խնայողությունների մասնաբաժինը տնօրինվող եկամտի կառուցվածքում 1992 թ. նվազեց հասնելով -12.0% -ի: Հետագա երեք տարիներին ցուցանիշը որոշակիորեն բարելավվեց, սակայն 1994-1995 թթ. 15 տոկոսային կետով արձանագրված անկման հետևանքով, որը պայմանավորված էր աննախադեպ բարձր գնաճով (1994 թ. ՍԳԻ-ն նախորդ տարվա համեմատ աճեց շուրջ 50 անգամ), ցուցանիշը կրկին դարձավ բացասական, ինչը շարունակվեց մինչև 2000 թ.:

Աննախադեպ տնտեսական աշխուժացման շնորհիվ (որն իր հերթին նշանակալի չափով պայմանավորված էր օտարերկրյա տրանսֆերտների մեծ ներհոսքով և վճարունակ պահանջարկի ընդլայնմամբ) համախառն խնայողությունների հարաբերական ցուցանիշը 2001 թ.-ից սկսած կտրուկ վերելք արձանագրեց և 2006-2008 թթ. ժամանակահատվածում կայունացավ 28 տոկոսի շրջանում, ինչը թեև նախորդ տարիների համեմատությամբ բավականաչափ բարձր արդյունք է, սակայն դեռևս ցածր է, եթե համեմատենք ներկայումս զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրներում կառուցվածքային ակտիվ վերափոխումների ժամանակաշրջանում արձանագրված խնայողությունների խիստ բարձր մակարդակի (միջինը՝ 40%) հետ[5]:

---

[4] Աղբյուրը՝ համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերը («Ազգային հաշվիների համակարգ» բաժին), (www.armstat.am):

[5] Տե՛ս www.worldbank.org (World Development Indicators):

Ինչպես արդեն նշել ենք, ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում դիտարկվող ժամանակահատվածում ևս լուրջ վայրիվերումներ է գրանցել, ինչը նույնպես խիստ մտահոգիչ է: Այսպես, 1997 թ. հասնելով իր նվազագույն մակարդակին՝ -38,0%, ցուցանիշը հետագա մի քանի տարիներին աստիճանաբար բարելավվեց՝ 2005 թ. հասնելով -14,4%-ի: Սակայն, հիմնականում ՀՀ դրամի արժևորմամբ պայմանավորված, ապրանքների և ծառայությունների ներմուծումը սկսեց աճել ավելի մեծ տեմպերով, քան արտահանումը, ինչի պատճառով 2008-ին ապրանքների և ծառայությունների զուտ արտահանումը ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքում արդեն -25.6% էր:

Մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած երկու տասնամյակներին ՀՀ տնտեսությունում աձանագրվել են ակտիվ կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում

- ՀՆԱ-ի կառուցվածքում էականորեն կրճատվել է արդյունաբերության մասնաբաժինը, և ավելացել է շինարարության ու ծառայությունների տեսակարար կշիռը,
- արդյունաբերության կառուցվածքում կրճատվել է մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, և ավելացել է էներգետիկայի մասնաբաժինը,
- մշակող արդյունաբերության կառուցվածքում էականորեն նվազել է մեքենաշինության մասնաբաժինը, և ավելացել է սննդի արդյունաբերության կշիռը,
- համախառն թողարկման կառուցվածքում ավելացել է ՀՆԱ կամ համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը,
- ՀՆԱ-ի կառուցվածքում նվազել է վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասնաբաժինը՝ ի տարբերություն համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների մասնաբաժնի աճի,
- համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների կառուցվածքում էականորեն նվազել է հիմնական կապիտալի սպառման մասնաբաժինը,
- ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքում 1990 թ. համեմատությամբ աճել է վերջնական սպառման տեսակարար կշիռը, և նվազել է համախառն կուտակման կշիռը,
- ՀՆԱ-ի կառուցվածքում արտահանման տեսակարար կշիռը դիտարկվող ժամանակահատվածում էականորեն նվազել է, ինչի արդյունքում ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման բացասական հաշվեկշռի հարաբերական մեծությունն աճել է,
- արտահանման կառուցվածքում բարձրտեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների մասնաբաժինը նվազել է (վերջին տարիներին այս ցուցանիշը չի գերազանցել 2%-ի սահմանագիծը, իսկ

2017 թ. տվյալներով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանման մասնաբաժինը ՀՀ ընդհանուր արտահանման մեջ կազմել է 0.19%՝ Հայաստանի համար ապահովելով 87-րդ տեղը 119 երկրների մեջ[6]),

➢ համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքում համախառն խնայողությունների մասնաբաժինը թեև վերջին տարիներին անշեղորեն աճել է, սակայն դեռևս ցածր է 1990 թ.-ի մակարդակից, ինչպես նաև միջազգային փորձի արդյունքների հիման վրա ստացված և առավել ընդունելի համարվող միջին մակարդակից:

Հատկանշական է այն, որ կառուցվածքային տեղաշարժերը ոչ թե նպատակային քաղաքականության արդյունք են, այլ խորհրդային տնտեսական կարգից ժառանգած կառուցվածքային և տեխնոլոգիական անհամամասնությունների, ինչպես նաև գլոբալ տնտեսական համակարգին հայաստանյան տնտեսության արագացված ներկառուցման հետևանք:

Վերջին շուրջ երկու տասնամյակներին տեղի ունեցած կառուցվածքային տեղաշարժերի օբյեկտիվ և տրամաբանական բնույթը դեռևս չի նշանակում, որ այդ տեղաշարժերը ցանկալի են և օպտիմալ հասարակության, պետության և երկրի երկարաժամկետ նպատակների իրագործման տեսանկյունից: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ տնտեսության նոր կառուցվածքի ձևավորումը և գործարկումը որպես կանոն տեղի են ունենում ցածր տեխնոլոգիական հենքի վրա, ինչը ՀՀ տնտեսության ներկայիս մրցակցային առավելությունները դարձնում է ոչ վստահելի և ժամանակավոր: Բացի այդ, արտահանման կառուցվածքը, որում էական մասնաբաժին ունի հանքահումքային արտադրանքը, խիստ խոցելի է միջազգային հումքային շուկաներում իրավիճակի տատանումների պատճառով, ինչը հստակորեն ի ցույց դրեց ներկայիս համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Տնտեսության արդի կառուցվածքի անարդյունավետության մասին է վկայում նաև այն, որ վերջին տարիներին առաջանցիկ տեմպերով զարգացում են ապրել տնտեսության այն ճյուղերը, որոնք որակյալ աշխատուժի նկատմամբ մեծ պահանջարկ ներկայացնել չեն կարող, հետևաբար տեղի է ունենում աշխատուժի կառուցվածքային փոփոխություն՝ դրա որակական հատկանիշների վատացում:

Վերը նշվածից բացի՝ տնտեսությունում առկա են ոլորտներ և գործունեության տեսակներ, որոնք թեև ներկայումս բարձր տեմպերով չեն զարգանում, սակայն համաշխարհային շուկաներում կարող են ակտիվ մրցակցության մեջ մտնել: Մասնավորապես այդ ասպարեզներում մրցակցային առավելություններ են թերբեռնված տեխնոլոգիա-

[6] Արտահանման կառուցվածքում բարձրտեխնոլոգիական ապրանքների ամենամեծ մասնաբաժինն ունեն Հոնկոնգը (51.67%), Ֆիլիպինները (35.87%) և Սինգապուրը (32.02%): Աղբյուրը՝ https://www.theglobaleconomy.com/rankings/Informa tion_techno logy_exports/

կան հզորությունները, որակյալ կադրային ներուժը, հեռանկարային գիտատեխնիկական մշակումները:

Այս համատեքստում չափազանց կարևոր նշանակություն են ստանում տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորմանն ուղղված համապատասխան պետական քաղաքականության մշակումը և իրականացումը, որոնց առանցքում պետք է լինեն տնտեսության կառուցվածքային գերակայությունների հստակեցումը և նպատակաուղղված կենսագործումը, տնտեսության մրցունակության բարձրացումը:

Այս տեսանկյունից հանրապետության տնտեսության կառուցվածքային քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի ներքին և համաշխարհային շուկաներում հայրենական ապրանքների ու ծառայությունների մրցունակությունը բարձրացնելուն միտված աջակցությունը, վերամշակման բարձր աստիճանով արտադրանք թողարկող, ինչպես նաև ծառայությունների ոլորտի ճյուղերի մասնաբաժնի ավելացման ուղղությամբ տնտեսական քաղաքականության ապահովումը:

Այս նպատակի իրականացման գործնական հնարավորությունները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է մշակել տնտեսության ներսում տեղաշարժերի օպտիմալ ռազմավարություն, ինչպես նաև ներդնել այնպիսի գործիքներ ու մեխանիզմներ, որոնք զգալիորեն կավելացնեն արտահանման ծավալները, ինչը կմեծացնի բնակչության զբաղվածությունն ու հետևաբար՝ եկամուտները, կբարձրացնի կենսամակարդակը:

Բանալի բառեր – *համախառն ներքին արդյունք, ՀՆԱ-ի արտադրություն, հիմնական կապիտալ, սկզբնական եկամուտ, տնօրինվող եկամուտ, եկամուտների ձևավորման հաշիվ, եկամուտների օգտագործման հաշիվ, համախառն կուտակում, խնայողություններ*

АШОТ МАРКОСЯН, ЭЛЯНОРА МАТЕВОСЯН – ***Структура экономики Армении и тенденции её изменения.*** – В статье рассматриваются структурные изменения в армянской экономике и их тенденции за последние 20 лет. Подходы к оценке прогрессивности новой структуры и возможностей создавать новую добавленную стоимость варьируются в зависимости от производительности, экспортной ориентации и т.п.

В статье выделены следующие задачи: изучение счёта производства ВВП и его структуры за длительное время, счёта образования первичных доходов и распределения, использования ВВП, а также взаимозависимости и закономерности между величиной заработной платы и сбережениями.

Мониторинг производства и использования ВВП позволил выявить ряд закономерностей в изменении пропорций различных секторов экономики, в частности, сокращения доли промышленности, увеличения доли строительства и услуг. Анализ, проведённый в статье, показывает, что за рассматриваемый период доля оплаты труда наёмных работников в структуре ВВП уменьшилась, в то время как увеличилась доля валовой прибыли и валовых смешанных доходов, что свидетельствует о недооценённости труда в Армении.

Ключевые слова: *валовой внутренний продукт, производство ВВП, основной капитал, первоначальный доход, располагаемый доход, счёт образования доходов, счёт распределения доходов, валовое накопление, сбережения*

ASHOT MARKOSYAN, ELYANORA MATEVOSYAN – *Economic Structure of the Republic of Armenia and Trends of Changes.* – The purpose of the article is to study the structural changes in the economy of the Republic of Armenia, their trends over the past 20 years. Approaches to assessing the progressiveness of the new structure of the economy and the possibilities of creating new added value vary depending on productivity, the export orientation of the economy, and other criteria.

Based on the mentioned goal, the authors highlighted the following tasks: they studied the GDP production account and its structure over a long period of time, through the formation of primary incomes and distribution, the use of GDP, as well as interdependencies and patterns that exist between wage and savings.

Monitoring of production and use of GDP revealed a number of patterns in changing the proportions of various sectors of the economy, in particular, reducing the share of industry, increasing the share of construction and services, as well as changes in the sectoral structure of GDP. The analysis carried out in the article also shows that over the period under review, the share of wages of employees in the GDP structure decreased, while the share of gross profit and gross mixed income increased, which indicates the underestimation of labor in Armenia.

Key Words: *gross domestic product, GDP production, fixed capital, initial income, disposable income, income generation account, income distribution account, gross accumulation, savings*

Ներկայացվել է՝ 12.02.2020
Գրախոսվել է՝ 24.02.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020